


կատար ամբողջութեամբ նիւթ մատակարարելով հայ կուլ-
տուրական պատմութեան ապագայ տնտեսաիրաւունքին,
Դրանով մենք ծառայած կը լինենք ոչ միայն հայ գիտու-
թեանը, այլ և հանրամարդկային կուլտուրական պատմու-
թեանը, որտեղ հայ ժողովրդի իրաւաբանական — ազ-
գագրական նիւթերը գալու են որոշ լոյս սփռելու, պարզ
կացուցանելու հասարակական -- իրաւաբանական յարա-
բերութիւնների բազմաթիւ խճճուած հարցերը, մութ,
տակաւին իրենց լուծման սպասող երկոյթները:

Խ. Սամուէլեան.



ՃԱԿԱՏԱԳՐԻ ՏՕՆԸ

(Համբարձումը)

ՎԻՃԱԿ ՀԱՆՆԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐԸ

Հայ ազգը ունեցել է և ունի բազմաթիւ սովորութիւններ,
որոնք իրենց հնութեամբ նոյն իսկ հասնում են մինչեւ հեթա-
նոսութեան ժամանակները՝ բերելով յիշողութիւններ այգքան
հեռու ժամանակներից՝ շատ ճշգրիտ հարադատութեամբ:

Սակայն այդ հին սովորութիւնները, որոնք մեծ մասամբ
ժողովրդական տօնի բնաւորութիւն ունին, զանազան աննպատ-
հանգամանքների պատճառով անհետանում են: Պատճառները
բազմազան են. և դրանցից մէկն այն է, որ մեր ազգը քաղա-
քակրթութեան ընդունակ լինելով՝ ընդունակ է և նորն ըմբ-
նելու և ընդունելու — իւրացնելու, որի հետեանքը լինում է հնե-
րի կորուստը, թէև նրանք ունենան իրենց մէջ բարձր աւան-
դութիւններ, հին փիլիսոփայութեան և մետաֆիզիկայի տար-
րեր. իսկ միւսը այն, որ ճակատագրօրէն դատապարտուած լի-
նելով պատմական սարսափելի տաքնապներին, որոնց յաճախա-
կի յաջորդականութիւնը ժամանակ առ ժամանակ շշմեցրել
է հային՝ աշխատելով խախտել նորա գոյութեան գործօններին
հիմքը, կտրելով անցեալի սրբազան սովորութիւններից, որոնք

առանձնապատուելիքներ են կատարել (և դեռ շարունակում են կատարել) մեր անցեալ կեանքում:

Ահա այս երկու գլխաւոր և ուրիշ երկրորդական պատճառներով մեր անցեալ կեանքի դոյութեան հիմքը կազմող սովորութիւններից շատերը, որոնք, կարելի է ասել, մեր կրօնից շատ քան են պարունակել (եթէ ոչ նրա բոլոր վարդապետութիւնները¹⁾), անհետ կորել են: Մի մասի դոյութիւնը մեզ յայտի է գրքերի միջոցով: Կենդանի մնացել են մի քանիսը մեր ժողովրդի մէջ, և հարկէ մօտալուտ կորուստի ենթակայ:

Այն տեղերում կարելի է գտնել կենդանի մնացած հաջադատ սովորութիւններ, ուր դեռ խաւար է տիրում, ուր հայ գեղջուկը դեռ շարունակում է ապրել նահապետական պարզեղանակով, որի համար հինը սրբազան է, պապական սովորութիւնը նուիրագործուած, սովորութեան հին լինելը գրաւական է նրա անպայման լաւութեանը և մեր գեղջուկը դեռ ևս իրեն միացած է զգում հնի հետ անխզելի կապերով:

Աւանդապահ է հայ գեղջուկը. բայց ծայրահեղ աւանդապահութեան կատարեալ տիպար է հայ գեղջիկահին:

Կինը առհասարակ նորաձեւութեան գերի է... արտաքինով միայն. իսկ ներքինով մալեւանդ աւանդապահ է. այնպէս որ, երբ պէտք է լինում և փնդուում է մի որ և է հին սովորութեան մնացորդ, միայն կինն է որ կարող է տեղեկութիւն տալ այդ մասին: Ամէն մի ժողովրդականացած սովորութեան վախճանը հասնում է այն ժամանակ, երբ կինը ձեռք է քաշում նրանից. իսկ տղամարդը արդէն վաղուց դադարած է լինում այդ հին սովորութեանը հետեւելուց: Այժմ մեր մէջ դոյութիւն ունեցող համեմատաբար փոքրաթիւ սովորութիւնների պաշտպանը կինն է:

Հայ կնոջ երեւմն գոյելի աւանդապահութեան հետ միանում է և աշխատասիրութիւնը: Նա ծանրաբեռնուած է տնային աշխատանքով. նրա ուշադրութիւնը կենդրոնացած է ընտանեկան հոգսերի վրայ միայն. նա զուարճանում է և բաւականութիւն գտնում, երբ տեսնում է իւր աշխատասիրութեան ու տնտեսագիտութեան արդիւնքը—իր տան կանոնաւորութիւնը: Նորա կեանքի և գործունէութեան ասպարէզը չորս պատի մէջ է և նա այդ նեղ շի գտնում: Մի խօստով նա դո՛հ է և բաւական իր սահմանափակ փիճակով—իր կրաւորական և խղճուկ դերով:

1) Մեր անցեալ քրիստ. կրօնը ես ընդունում եմ իբրեւ սովորութիւնների մի շարք, որոնց ոգին աւելի հեթանոսական է եղել՝ բօղարկուած քրիստոնէական անունով եւ այդ գոյնով շախրուած:

Նախ քիչ անգամ, այն էլ միայն գիւղերում, նա թողնում է տան յարկի չորս պատերը, դաշտ է գուրս գալիս օգնելու տան աշխատաւոր ձեռքին—իր մարդուն, հնձում է և կախում:

Այս խիստ սահմանափակ դերից ու շրջանից հայ կինը գուրս է գալիս այն ժամանակ, երբ հասած է լինում մի որևէ աւանդական սովորութեան հերթը—նա մի առ ժամանակ թողնում է իր բազմաթիւ հոգսերը, աղատ է զգում իրեն և համայնական ընկերակցութեամբ ասնում է իր սիրելի տօնը և սովորութիւնը՝ չտեսնուած խանդավառութեամբ, աղատ վայելքի անդուսպ յափշտակութեամբ, անսովոր շքով: Այնքան նուիրական են նրա համար այդ սովորութիւնները—պապերից մնացած աւանդները: Լինելով բնութեան աւելի մօտիկ և հարազատ, հայ գեղջիկուհին առանձին ոգևորութեամբ ու հաւատարմութեամբ պահպանում է մանաւանդ այն սովորութիւնները, որոնք սերտ կապ ունեն բնութեան հետ և իրենց մէջ ամփոփում են նրա գրեթէ ամէն մասերը:

Այսպիսի տօն-սովորութիւններից մէկն է վիճակի տօնը, որ մի քանի ո՛չ էական տարբերութիւններով տօնւում է ամէն տեղ մեզանում. իսկ գիւղերում այդ լինում է ամենամեծ շքով, հազարաւոր հանդիսադիրների մասնակցութեամբ, իգիւլիական ամեն հրապոյրներ պարունակելով իր մէջ:

Վիճակ հանելու սովորութիւնը իր մէջ բովանդակում է հեթանոսական հաւատալիքներից շատ հարազատ յիշողութիւններ, որոնք արտացոլացնում են հեթանոս հայի կրօնական հակացողութիւնները: Եւ դարեր շարունակ կենդանի մնալով, այդ տօնը, չնայած կործանիչ ժամանակի ուժին և մոռացման ամէն հաւաստի վտանգին, այժմ մեր ժողովրդի ամենախոշոր կենցաղական գիծն է կազմում և է ժողովրդական տօն. տօն ծաղիկների, բոյսերի, ջրերի, աստղերի, իսկ այս բոլորը, ինչպէս յետոյ կ'տեսնենք, իրենց դերով խմբւում են նախագրի—վիճակի—բախտի որոշման շուրջը:

Այս նշանաւոր տօնը, հաւանօրէն, սկիզբում մի հիմնական նմանութիւն ունենալով՝ միայն վերջին, մօտիկ ժամանակներում է կրել այն փոփոխութիւնները, որ նկատելի են տարբեր վայրերում: Տարբերութիւնը երրորդական, չորրորդական կէտերում է նկատւում, իսկ գլխաւոր կէտերը, իրենց արտաքին ձեւով և ներքին նշանակութեամբ գրեթէ ամէն տեղ էլ նոյնատեսակ են: Մի քանի տեղ տարբերութիւնը առաջ է գալիս աւելորդ դորձողութեանց բարդումով և ժամանակի զանազանութեամբ. այսպէս վիճակ հանելու օրը մի քանի տեղերում ընդունուած է չամբարձումը. ուրիշ տեղեր հետևեալ առաջին

կիրակին, կամ Հոգեգալստեան կիրակին. աեղտեղ մինչև իսկ երկարացնում են մինչև վարդավառը: Սահայն այս տօնի ըարդ գործողութիւնների սկզբնաւորութիւնը ամէն տեղ էլ ընդունուած է անել Համբարձման նախորդ օրը—չորեքշաբթի—ժողովրդականած ծաղկամօր տօնին: Տօնականտարութեան իսկական օրը պէտք է համարել Համբարձումը, որովհետև սա է գարնան ամիսներում ընկած քրիստոնէական ամենամեծ տօնը—(կաթնապուրի տօնը, որը, եթէ մի քիչ հեռուն գնանք դարձեալ կապուած կ'տեսնենք ըուսականութեան առատութեան տօնի հետ. և այդ ամենից յարմարն է ներկայանում՝ իր հետ միացնելու հեթանոսութիւնից մնացած ժողովրդին սիրելի տօնը:

Անցնում է Հայաստանի երկարատև ձմեռը, բացւում է ամպամած երկիւրը վերջապէս: Դալիս է դուարթ դարունը և գորշացած երկիրը կանաչում է: Ազատ հրճուանքով դուրս է նետւում հայ գեղջուկը իր ստորերկրեայ խրճիթներից: Ազատ է զգում իրեն և գեղջիւհին. նա առ ժամ թողնում է իր զբաղմունքը. կամենում է ինքն էլ վայելել ընտիւթեան առատ պարգևը—գարնային տաք արևը և կանաչների դալարաւէտ տեսարանը, նրանց արձակած դուրեկան հոտը: Բնութիւնից աւելի ուրախ է նորա զաւակը. նա կամենում է տօնել այդ հրաշալի ընտիւթիւնը իր բոլոր պէսպէս ու այլազան հրաշալիքներով. որոնք կապ ունին գարնան հետ և նրա ծնունդն են...

Եւ ահա հանդէս է գալիս հազարան ձայնի ու բուրմունքի աղբիւր ծաղիկների ու գլգլան վաղող «ալանակիտ ու հանդարտիկ» հոսող ջրերի Մօր—գարնան տօնը: Այժմեան մեր վիճակ հանելու սովորութիւնը (Համբարձման տօնը) նոյնանում է հեթանոս հայի գարնան մեծ տօնի հետ անշուշտ՝ որովհետև ներկայ սովորութիւնը իր մէջ ամփոփում է անհրեքելի փոփոխութիւնը, որոնք հարադատ են հեթանոսութեան. և այս սովորութեան մէջ եղած այն կետերը, որոնք կապ ունին գարնան հետ բոտերեոյթին, այլ հաւանօրէն յետոյ են միացել: Բոտ երեոյթին ենք ասում նրա համար, որ գրանցից շատերը այնպէս են քրիստոնէացել (օր. ծաղկամօր պաշտամունքը, որի մասին յետոյ կ'ըստենք), որ գոժար է որոշել նրա իսկական գոյնը:

Մեղ արդէն յայտնի է պատմութիւնից թէ ինչպէս Նուսուրիչը աշխատում էր նորադարձ ժողովրդին սիրելի հեթանոսական տօները փոխարինել քրիստոնէականով. օր. Վարդաւառը, որի մասին յատկապէս յիշատակութիւն կայ և ուրիշ մի քանի տօները: Սահայն ժողովուրդը իսկապէս ոչ թէ փոխեց իր տօնը—մոռացաւ նրան, մի բան, որ բոլորովին անընտան պիտի լինէր, այլ, պահելով հինը, ընդունեց միաթամանակ և նորը, որից

անխուսափելիօրէն առաջ եկաւ միացում: Այն, ինչ կրօնի վարդապետները չէին կարող հաշտեցնել, ժողովուրդը հեշտութեամբ հաշտեցրեց—միացրեց, իր ձեռք տուեց, իր դադավարը, որից դժուար էր դատուել, մէջը դրաւ և այնպէս ընդունեց: Վարդապետի տօնը աղօտ փառաքան է տալիս մեր ասածներին: Թէև շատ դարեր են անցել այն օրից, որ մեր ժողովուրդը իսկական քրիստոնեայ ժողովուրդ է դարձել, մինչև անգամ մոլեռանդութեան տիպար է հանդիսացել. սակայն նոյն այդ վարդապետի քրիստոնէական տօնի հետ շարունակում է պահել և տօնել հեթանոսութեան մնացորդներ. այսպէս՝ վարդապետին կատարում է Քրիստոսի այլակերպութեան յիշատակը և սրա հետ զուգընթացաբար կատարում է իրար վրայ ջուր սրսկելու և աղանձի թռցնելու յայտնի հեթանոսական սովորութիւնները, թէև աղօտացած ձևով: Իսկ վիճակը—Համբարձման տօնը արդէն աշխարհայ փառաքան է տալիս:

Վիճակ հանելու սովորութեան մասին յատկապէս դժուար է ասել թէ Լուսաւորիչը փոխել է աշխատել և տեղը սահմանել է Համբարձման տօնը, ժողովուրդն է միացրել ըստ իր սովորութեան. և իրօք այս միացումը ինքնըստինքիան է եղել. նա ունեցել է դարնանային մի փառահեղ տօն, որը ժամանակով եթէ ոչ նոյն, դէթ շատ մօտ է եղել Համբարձման տօնին, ուստի շատ ընտան է, որ միացնէր այդ երկուսը, որպէսզի քրիստոնէական ընաւորութիւն առած լինէր. կամ, այլ խօսքով քրիստոնէացնէր: Անշուշտ այս աւելի լիակատար չափով է եղել այն ժամանակներում, երբ ինքը, իբրև ջերմ քրիստոնեայ խորշելիս է եղել հեթանոսութեան մնացորդներից. բայց և միաժամանակ նրա մէջ խօսելիս է եղել աւանդապահութեան ձայնը, որով և սիրել է այդ մնացորդները՝ դժուարանալով ձեռք վերցնել դրանցից:

Նոյնը կարելի է ասել Տեառնընդառաջի տօնին կրակ վառելու և ուրիշ տօների մասին, սրանք, դժբախտաբար պատուած են անորոշութեան քողով և քիչ բան են ասում իրենց հետ կապուած հին հաւատալիքների մասին:

Բարեբախտաբար այս բոլոր տօն—սովորութիւնների մէջ, միայն Համբարձում—վիճակ հանելու տօնը առանձնաշնորհեալ դերք է դրաւել և դրա շնորհիւ պահուած է շատ ընդարձակ և գործողութիւնների կողմից լիստ բաղմահողմանի. աւելի շատ, քան միւս բոլոր տօները միասին վերցրած, տալիս է տեղեկութիւններ նախաքրիստոնեայ հայի հաւատալիքների մասին—ջրի, բուսականութեան, աստղերի և ճակատագրի. ճիշտ այնպէս գրեթէ, ինչպէս որ դրանք մնացել են դրացի Պարսիկ (Ֆարս) ժո-

դուրդի մէջ: Վերջին երկուսը աստղերն ու ճակատագիրը, կարելի է կարծել, որ յետոյ են միացել դարնանային տօնի հետ, ընդորոշին կերպարանաւիտիւնով նրան և դարձնելով բախտ դուշակելու, ճակատագիր որոշելու մի խաղ: Հէնց այս պատճառով էլ շատ տեղերում իսկական սովորութիւնը դարձարել է ընդհանուր ժողովրդական տօն լինելուց և դարձել է սեւիականութիւն նորահաս աղջիկների և մատամբ էլ տղաների, որովհետեւ իրենց բախտը դեռ որոշուած չէ — չեն ամուսնացել, և այդ խաղով ուզում են իմանալ, թէ «ինչ պիտ լինի իրենց ապագայ կեանքը, բախտաւոր թէ անբախտ...» «Արդեօք պիտի արժանանան այն տղամարդուն կին դառնալ, որին սիրում են» և այլն շատ դեռ ևս չլճուած հալցեր, որոնց լուծումը նրանք վիճակից են սպասում:

Այժմ անցնենք բուն վիճակի նկարագրութեանը: Սկսենք ժամանակի կարգով: Ինչպէս ասացինք, ամեն տեղ էլ տօնական տարութեան սկիզբը լինում է Համբարձման տօնի նախորդ չորեքշաբթի օրից: Գործողունները սկիզբը դնում են աղջիկները:

I Չորեքաբթի

Այսօր Վանում աղջիկները ամբողջ օրը ընդորոշին ազատ են ընտանեկան աշխատանքներից: Վաղ առաւօտից սկսած զանազան թաղերի աղջիկները առանձին առանձին խմբեր են կազմում և սկսում պատրաստութիւններ տեսնել իրենց համար չափազանց ցանկալի տօնը — բախտագուշակ վիճակի տօնը կատարելու: Նրանք արդէն մեծ գործ տեսնողի լրջութիւն են ստանում, խորհրդաւոր արատյայտութիւն են տալիս իրենց գէմ-

4) Ծանօթութիւն — վիճակի տօնական տարութեան սովորութիւնը նկարագրելու համար ես կ'օգտուեմ Վանում եղած կարգը ընդարձակօրէն, որովհետեւ թէ յիշողութեամբ եւ թէ անդրադարձի օգնութեամբ կարող եմ աւելի լրիւ ներկայացնել այս խոշոր կենցաղական գծի ամեն մանրամասնութիւններն ու հետաքրքիր կողմերը: Եւ որովհետեւ գործողութիւնները խիստ բարդ են եւ բազմատեսակ, դրա համար էլ ես նկարագրեմ այն սկզբից մինչեւ վերջը առանց համեմատելու, որպէսզի ամբողջութիւնը չխանգարուի եւ ընթերցողը կարողանայ հետեւել գործողութեանց ընթացքին եւ ամփոփ պաղափար կազմել: Յետոյ կ'յիշեմ ուրիշ տեղերի հետ ունեցած տարբերութիւնը թէ ո՞ր ինչպէս են կատարում եւ թէ ո՞րն է հարազատ սովորութեան իսկական ոգուն: Վերջում կտանք եւ արարողութիւն — գործողութիւնների բացատրութիւնը:

քին և առհասարակ զգում են, որ մի անտեղիություն գործի են ձեռնարկում:

Մենք հետեւենք այս խմբերից մէկին: Իբրև մի ամբողջութիւն, մի մարմին, անհրաժեշտ է համարուում ունենալ գլխաւոր, որ լինում է ամենից. մեծը կամ գեղեցիկը. ապա որոշում են պաշտօնները. ծաղիկ հաւաքողը, ջուր վերցնողը, առաջնորդը և վերջապէս գրօշակակիրը: Այսպէս կարգաւորուած խումբը վաղառաւօտից սկսած զանազան ուրախ երգեր երգելով սկսում է այգիներէջ ծաղիկ հաւաքել. խմբից առաջ գնում է գրօշակակիրը, մի փայտի ծայրին մի փունջ ընտիր ծաղիկներ և մի գոյնզգոյն թաշկինակ կապած: Իսկապէս գեղեցիկ տեսարան է Այգեստանի գեղեցիկ այգիներում այս խմբի աշխատանքը տեսնելը. մանաւանդ, երբ հետները վերցրած մաղերը ծաղիկներով լցրած նստում են վնջելու: Նրանք ածա շարուած ուրախ քրքիշներով առաջ է տարւում աշխատանքը անդադար շարունակուող երգերով: Փնջելու գործողութիւնը վերջանում է ճաշի ժամանակ. նախապէս հետները վերցրած ուտելիքը բաց են անում և ճաշում նոյն ուրախ տրամադրութեամբ, բոլորը մի սեղանից: ճաշից յետոյ խումբը մի քիչ հանգստանում է:

Իրկինսայահին, մի տեսակ հանդիսաւոր թափօր կազմելով սկսում են իրենց շրջանի տները մանդալ և մաղերով փնջերը քաժանել: Մտնում են բակը, երգում են վիճակի երգերից մի տուն, տալիս են մի փունջ ծաղիկ, երբեմն էլ մի ներկած հաւկիթ, որ առաջուց պատրաստում են. ստանում են մի քանի փորայ. ապա առաջարկում են այն փարչը, որի մէջ յետոյ պէտք է ջուրը լեցուն, որպէսզի տան տէրը մի նշան ձգի մէջը: Տան տէրը, մանաւանդ արփուներ հառած աղջիկը, խորհուրդ է անում և նշանը ձգում ամանի մէջը. առհասարակ տան ամէն անդամի անունով մի մի նշան ձգում են, որպէսզի ամէնքի ապագայի համար էլ մի բան գուշակուի. այս գուշակութիւնը հանում են երգուած երգի այն կտորից, որի երգուելուց յետոյ հանուում է իրենց տուած նշանը—մի ուլունք, մատանի, կոճակ կամ բանալի:

Այս ձևով իրենց շրջանում ման գալուց և նշաններ հաւաքելուց յետոյ, գնում են իրենցից մէկի տունը և սկսում պատրաստել վիճակ հոշուածը, որը մօտաւորապէս այսկերպ է լինում: Վերցնում են մի կանգուն երկարութեամբ մի երկնդանի փայտ, վերի մասում կապում են մի թղաշափ փայտ, որից ստացւում է մի խաչաձև, երկնդանի—երկու ստներով. ապա այս փայտին հաղցնում են մի տարեկան կրակայի հազու տեր—տե-

ղական տարազով, որքան կարող են թանկագին կտորից ի հարկէ, միաժամանակ և աշխատում են այդ անել հին ձևի տարազին մօտիկ: Փայտի վերի մասին գլխի ձև են տալիս—շորեր կապելով, գլուխը կապում են տեղական հարուի գլխի ձևով՝ զարդարում են, ինչ որ կարող են. գլխի առաջին մասին մօտաւորապէս դեմքի ձև տալուց յետոյ, կապում են ուղիտակ թաշկինակով և նկարում են աչք, քիթ, քերան, յօնք և այլն, մի խօսքով դարձնում են ամէն բանով, բայց գլխի կապից, երախայի շատ նման մի մեծ խրճիկ, որը իր, շատ անգամ և ոսկի դարդերով, բաւական մեծ արժէք է ունենում. ունենում է ճակատնոց—ոսկու շար, մանեակ կամ ճտնոց, կուրծքը զարդարած տեսակ տեսակ զարդերով. ինչ խօսք, որ ածաթէ խաչը նոյնպէս զարդարում է տիկնիկի կուրծքը...

Այսպէս պատրաստուած տիկնիկը ամրացնում են փարչի բերանին. երկուսը միասին կոչւում են վիճակ, թէև դեռ ևս պակասում է անհրաժեշտ տարրերից մէկը—ջուրը, որը առանձին դեր ունի: Արդէն օրը միջնում է, երբ պատրաստ է լինում ծաղիկներով և ուլունքներով զարդարուած խրճիկը, որին դնում են մի ապահով տեղ, հսկողութեամբ մի քանի աղջիկների:

Անգործ երիտասարդների և պատանիների հետաքրքիր խումբը ծածուկ տեղերից դիտում է այդ առաջին օրուայ աղջիկների խմբի ամբողջ գործողութիւնները և քայլ առ քայլ դիտում է նրա շարժումները. մանաւանդ վիճակի պահուած տեղն իմանալու համար:

Վանեցի կինը չորեքշաբթի օրը տօն է պահում «ծաղկամօր» անունով, ոչ մի գործի չի ձեռք տայ, որպէսզի զաւակները ազատ լինին կարմուկ և ծաղիկ հիւանդութիւնից: Վիճակի համար ծաղիկ հաւաքելը, պատրաստելը և եօթն տեղից ջուր վերցնելը աղջիկների գործն է, մնացած գործողութիւններում խառնուում են և գործը կարգադրում են—զեկավարում են նորատիկներն ու հարսները:

II Չորեքաբքի—լոյս հինգաբքի գիշեր.

Գալիս է հրաշալիքների դիշերը... Արևի մայր մտնելուց մի քիչ յետոյ աղջիկներն խմբից ընտրում են եօթ հոգի՝ եօթ աղբիւրից կամ ջրհորից ջուր վերցնելու: Վերցնում են նոյն լայնաբերան իարչը՝ մեջը լցուած նշաններով և անխօս սկսում եօթն աղբիւրից (եթէ կայ) կամ եօթն ջրհորից ջուր հաւաքե-

լու ծէսը կամ արարողութիւնը՝ չընտելը այս գործողութեան էական խորհուրդն է կազմում. վերցնում են ամէն մի տեղից եօթ ամի ջուր: Կթան կենդանի ունեցող տանը իր ջրհորից ջուր չի տալիս որպէսզի կթանի կաթը չցամաքի: Հաւաքած ջրի մէջ ձգում են եօթ տեսակ ծառից և եօթ տեսակ ծաղիկներից մի մի տերեւ և թերթիկներ. եօթ հատ քար և մի բուռ աւազ: Ամանը բերանաւաց դնում են «աստղունը» — բաց երկնքի տակ, կանաչ խոտերի և ծաղիկների մէջ, որպէսզի «աստղունը իրիշկան վերէն» (աստղերը նայեն վրան) և, երբ Քրիստոս կէս գիշերին երկինք համբառնայ՝ «շնորհքն էճնի վերէն» որպէսզի ջրին հաղորդուի երկնային ոյժը և հետեւեալը և ապակայ գուշակութիւնները անվրէպ և լաւ լինեն: Այս գործողութիւնը կատարելիս մանաւանդ մեծ գգուշութիւն են գործ դնում, որ տղաները չիմանան, որովհետեւ նրանց հպումը ոչնչացնում է գուշակութեան ոյժը. թացօդեայ տեղում պահում են և խրճիկը:

Այս գործողութիւնից յետոյ և առհասարակ մինչև խաղի վերջը երիտասարդների յատուկ խուզարկու խմբեր աշխատում են գտնել վիճակը և փախցնել. աղջիկները պահապաններ են նշանակում և պաշտպանում են. բայց շատ անգամ տղաներին աջողում է, երբեմն զօռով, փախցնել վիճակը. չեն վերադարձնում, մինչև իրենց պահանջած փրկանքը չեն ստանում:

Վանին մօտիկ Լէզք¹⁾ գիւղը, իր Ամենափրկիչ վանքով ուխտատեղի է Համբարձման տօնին. հազարաւոր ուխտաւորները համախմբուած կատարում են վիճակի խաղը, բնկերակցութեամբ տղամարդկանց և դհօլ — գուռնայի: Այստեղ տղաների և աղջիկների մաքառումը շատ խիստ է վիճակը ազատ պահելու համար տղաների գողանալուց, դնում են հեռաւոր դաշտերում, կանաչաւէտ արտերի մէջ. երբեմն էլ իրենց միջից ջոկում են ուժեղներին, որ պէտք է ասել, գիւղերում կան, շատ անգամ տղամարդոց գերազանցող ուժով. դնում են պահապան, որպէսզի երիտասարդների ուժ գործադրելու դեպքում, կարողանար

1) Այս գիւղը, ինչպէս ասանդութիւնից յայտնի է, կապ ունի Արա. գեղեցիկի եւ Շամիրամի առասպելի հետ. Լէզք անունը բացատրում է. այն բլուրը որի վրայ դրուած է եղել Արայի դիակը՝ լիզող աստուածների բժշկութեանը յանձնելու համար, այժմ այդ բլուրի դաղաթի վրայ է գտնուում վանքը, որ Համբարձման տօնի եւ յատկապէս վիճակի ուխտատեղի է: Գուցէ պատահականութիւնից զուրս մի հիմնաւոր պատճառով է եղել այս բանը: Նոյն գիւղի հետ են կապուած են եւ ուրիշ մի կարգ առասպելներ. որոնք պտտւում են դեռ եւս եւ որոնք մօտիկ նմանութիւն ունին ասորական զին առասպելների հետ:

ազատել լիճակը գերութիւնից: Գերի լիճակին ազատելու համար տալիս են պահանջուած փրկանքը անպայման, գաթաներ, տապակած հաւ, իւղ, հարիւրներով ձու և այլն: Այս փրկանքը հատուցանելով համար ժողովարարութեան են դիմում, հաւաքելիս երգում են լիճակի երգերից հետևեալ հատը.

Վիճակն ինկեր ի դերի,

Ազաբ լաճերաց ձեռն ի,

Տուն երկու ձու կժողվեմ:

Քե դերութիւնից կազատեմ:

Զան, լիճակ, Զան Զան:

Զան ծաղիկ Զան Զան

Իսկ երբ աղջիկները յաջող դուրս եկան մաքառումից և կարողացան լիճակը պահպանել մինչև «բախտ գուշակելու» արարողութիւնը, այն ժամանակ սկզբում սկսում են սուր վերաւորական երգերով ծաղրել աղաների թուլութիւնը, յետոյ անցնում են խաղին: Բերենք այդ կծու երգերից մի քանի հատը.

Կանաչ կենան աղջիկներ,

Աէջբակոտոր ազաբներ

Ձեկան տարան լիճակներ...

Զան, լիճակ... և այլն

Վիճակ նստե վէր պատին

Ազաբ լաճեր վէր լակին¹):

Զան.

Վիճակ նստե վէր իշուն,

Վիճակի փէշերն ի նիշուն,

Ազաբ լաճեր լիճկին շուն:

Զան լիճակ... և այլն

Այս կարճ ընդմիջումից յետոյ շարունակենք հրաշալի գիշերուայ մասին խօսել, երբ Վանեցու երեակայութիւնը և հարուստ աւելորդապաշտութիւնը՝ իւր անթիւ առասպելներով կենդանանում է, երբ վճռում է բախտը հազարաւոր «բէմուրազ» մնացածների և թաղում է նոյնքան յոյսեր անվերջ կերպով:

Այս գիշեր ամէն Վանեցի աղջիկ մի ձու է դնում տանիքի վրայ, որպէսզի կախարդական բոպէին, երբ երկինքն ու երկիրը

* Լակ—կենդանիների համար պատրաստած կերակուր:

իրար են կպչում, ձուլի վրայ գրուի դնողի բախտը, եթէ գիրը կարմիր եղաւ, հրեշտակի գրած է և լաւ բան է գուշակում. եթէ սև եղաւ, սատանայի գրած է և վատ է գուշակում: Երկտասարդները այս բանում էլ խառնում են իրենց մատը և գրոտում ձուն սև կամ կարմիր գրով, նայած թէ ով է նրա տէրը—ո՞ր աղջիկը:

Կանայք չափում են բոյսերի կապերը (երկու ծունկերի տարածութիւնը) և կարմիր թելով չափում, հետեւեալ առաւօտը եթէ կապերը մեծացած լինին, ապա դա նշան է, որ իրենք աւելի երկարակեաց կլինեն քան այն անձը (մեծ մասով ամուսինը) որի վրայ խորհուրդ են արած լինում: Հակառակը՝ հակառակ նշանակութիւն կունենայ, հակառակն է գուշակում: Այս բանը երբեմն անում են կողպէջով:

Վանեցին կարծում է, թէ այն գիշերուայ կիսին ընտելութիւնը կախարդում է, կեանքը ամէն բանում կանգ է առնում. նոյնպէս և աճեցողութիւնը՝ մարդկանց և բոյսերի մէջ. կանգ է առնում և ջուրը. երկինքն ու երկիրը համըսուրում են, ծառերը իրար ողջոյն տալիս: Մի խօսքով կանգնում է Չարխիֆալագը—Տիեզերական Անիւը, որից է կախուած ամէն ինչ, որի կանգնումով կանգնում է և ամէն ինչ, մարդն՝ ապրելուց, բոյսն՝ աճելուց, ջուրը՝ հոսելուց, և այլն...: Ով որ այս կախարդական ժամին արթուն լինի և հանդիսատես դառնայ անցած դարձածին, ինչ որ խնդրի Աստուծուց՝ կկատարուի անյապահ: Անքուն մնացողներ շատ են լինում, քայց հէնց այդ ըոպէին, երբ կեանքը դադարում է, ամէնքը քնում են անպայման: Պատմում են, թէ մի մարդ իր այգին ջրելիս կարողանում է հանդիսատես լինել կախարդական ժամի անցած դարձածին,

4) Մհերի Դռուք գտնւում է Վան-Այգեստանի հիւսիսային կողմից սեպացած քարաժայռի վրայ. մօտաւորապէս չորս կանգուն բարձրութեամբ եւ 2 կանգուն լայնութեամբ. հեռուից շատ նման է իսկական դռան. դուռը կողքերից բաժանուում է ճեղքերով, այնպէս որ դա աւելի նմանութիւն է տալիս իսկական դռան. Դուռը ծածկուած է սեպապիր արձանաղործութիւնով: Վերջին տարիներում մօտիկ Թօֆրակ-Կալէ բլուրի մէջ պեղումներ կատարող գերմանացի դիտնականները—Բէլք եւ Լիման. արտադրիցին եւ այդ դրան արձանաղործութիւնը. որ շատ դժուար կարգացուողներից է. բովանդակութիւնը վերաբերում է Ասորեստանի պատմութեան:

Այս դռան մասին եղած առասպելը հաւասարապէս ընդունելի է եւ տեղացի տաճիկ ժողովրդից:

տեսնում է ջրի հոսանքի կանգ առնելը և ծառերի խոնարհու-
թիւն անելը. ցանկացել է մի խնդրուածք անել, կամեցել է
ասել— «բահը—ոսկի...» բայց սխալուել է և ասել է— «բահը-
թիւ՛ակ...» և իրօք, քահն թի է դարձել: Որպէսզի հաստատ
կմանան ծառերի շարժման մասին, թէ իրօք նրանք իրար դուռի
են տալիս, ժողովուրդը քարեր է դնում ծառերի ճեղքերի վրայ,
եթէ առաւօտեան քարը ցած ընկած եղաւ, նշանակում է
ճիշտ է և իրենց առաջուց արած խորհուրդը «ի բարին կատարի»:

Չուրն էլ է ենթարկւում կէս զիշերուայ կախարդանքին.
նրանում դեռ մնում է կախարդանքի ոյժը, հետևաբար խիստ
առողջարար է լինում. այդ պատճառով աշխատում են ամ-
բողջ ընտանիքով լուսաբացին լողանալ և ջրին յանձնել մարմնի
«ցաւն ու չորքը»:

Կախարդական զիշերը Վանում այսքանով չի լուսանում.
բացւում է Մհերի Դուռը¹, ուր կաշկանդուած-կապուած է
հզօր Մհերը. նա կարող է դուրս պրծնել և աշխարհը տալն ու
վրայ անել. ոսկայն Աստուծոյ հրամանքով տեղից չի շարժւում,
որովհետեւ դեռ չի մօտեցել աշխարհի վախճանը: Մհերի հետ
նոյն դռնից ներս պահուած է անբաւ հարստութիւն. Չարխի-
ֆալազն էլ այդ դռնից ներս է. պատահել է, որ մի մարդ այդ
ժամին ձիով անցնելիս է եղել և տեսել է դուռը բաց. մարդը
մտնում է ներսը, ձին բեռնաւորում ոսկով ու արծաթով և
դուրս է գալիս. վերադառնում է մոռացած փայտը վերցնելու,
լրանում է կախարդական ժամի տեղութիւնը և դուռը փակ-
ւում է, մարդուն ներս թողնելով. մի տարի յետոյ, նոյն ժա-
մին դուռը բացւում է և մարդը ողջ առողջ դուրս է գալիս:
Պատմում են տեսնողներ են եղել, որ ամէն տարի կախարդա-
կան ժամին Մհերի ձին դանձեր է դուրս թափում բաց դռնից.
մինչև անգամ հին ժամանակներում ցոյց են տալիս եղել այդ
դանձերով հարստացած մարդկանց:

Այսքանը համառօտաբար այն ամէն վարմանալի բաների
մասին, որ ժողովուրդը վերագրում է կախարդական ժամին:
Այժմ անցնենք վիճակի խաղի իսկական օրուայ գործողութիւն-
ներին—Համբարձման տօնին:

III Հինգեաբբի-վիճակի խաղը¹.

Այսօրը, ինչպէս մի մեծ տօնակատարութեան օր, հանդի-

1. Վիճակի խաղը երբեմն թողնում է հետեւեալ կիրակի օրուան
կամ Հոգեգալստեան տօնին, երբեմն մինչեւ Վարդավառը: Այդքան ժա-
մանակում չորը եւ նշանները խնամքով պահում են ծածուկ տեղ.

սաւորութիւն է նկատուում մանաւանդ ազջիկներէ դէմքերէ վրայ, աւելի քան ուրիշ մեծ տօները, ինչպէս Զօրհնէքն ու Զատիկն են: Իբրեւ տարուայ տմենագեղեցիկ եղանակ, Վանի նման գեղեցիկ երկրում ուղղակի շտեմնուած փայլ ու գրուշու թիւն ունի շամբարծումն ու վիճակի խաղը: Դեռ վաղ առաւօտից այգիները լի են լինում դարդարուած ազջիկներով և հարսներով: Գեղեցիկ ծաղիկները կազմում են նրանց և հանգէտի գլխաւոր դարդը: Ճաշից յետոյ սկսւում է խաղը: Այդ ամբողջ օրը բոլորը այգիներում են անցկացնում, հարիւրաւոր բազմամարդ խմբերով, երբեմն հարեան այգիներում: Միանում է և բոլոր կանայցի դասը անխտիր: Սկզբում բացւում է մի ընդարձակ սեղան, շրջանաձև շարւում են բոլորը և ամէնքը իրենց հետ վերցրած ուտելիքէն մէջտեղ են բերում, հաւասարապէս վայելում: Վերջացնելուց յետոյ մէկը վերցնում է վիճակը (ջրի փարչը և խրճիկը) առաջ է անցնում, միւսները խմբով հետեւում են, կազմում են մի տեսակ թափոր ու երգում գովքի երգեր բարձր ձայնով, դուրեկան եղանակով: Այս գովքի արարողութիւնը երբեմն նստած են անում:

Առաջ բերենք այդ երգերից մի քանի տուն.

Տեսէք վիճակն ի՞նչ կուզի,

Սրտի ուզածըն ի՞նչ ի.

Սարերով ցորեն կուզի,

Սրտերով դարի կուզի:

Զան, վիճակ, Զան, Զան.

Զան, ծաղիկ, Զան, Զան:

Վիճակ նստե բով կանի,

Վարդն երեսին հով կանի.

Կէս լանգառի վարդ եմ ես,

Եարոջ համար բացուայ ես:

Զան, վիճակ . . . և այլն:

Վիճակ, վիճակ դուրս էլաւ,

Վիճիկ վրան լոյս իջաւ.

Իմ նազլու եարոջ խաթրէն

Էն ի՞նչ աղէք բախտ էլաւ:

Զան, վիճակ . . .

Վիճակ նստե կար կանի.

Ասեղ կտորաւ, «թըշ» կանի.

Կետուր մեռաւ, «վըշ» կանի

Զան, վիճակ . . .

Գովասանական երգերից յետոյ նոյն կարգով նստում են:

խրժիկը փարչից զատում են, խրժիկ-վիճակը ձեռքից ձեռք ման են ածում, համբուրում են և դնում մի պատուաւոր տեղ և սկսում բուն վիճակահանութեան խաղը:

Ամէնից առաջ ջոկում են մի քանի փոքրիկ երախտներ-տղայ կամ աղջիկ, որոնք բոլորովին լանմեղ՝ լինին և հասկացողութիւն չունենան իրենց դերի մասին. ապա դրանցից վիճակով ընտրում են մէկին կամ երկուսին, որ հերթով հանեն նշանները: Երկուսի մէջ տեղը դնում են խորհրդաւոր փարչը և երեքին միասին ծածկում անթափանց մեծ քողով: Ընտրուածը չափիտի իմանայ և չարն ու բարին, մինչև իսկ արեւի ծագման կողմը. ընտրութիւնը շատ զգուշաւոր է լինում, որովհետև շատ անգամ դրանցից է կախուած իրենց բախտի գուշակութիւնը. այդ զգուշութիւնը ձեռք է առնում խարդախութեան առաջն առնելու համար: Վերջապէս երկու փոքրիկները, որոնց «Վիճակահար» են առում, ձեռները մինչև արմուկը վեր քաշած խաւնում են փարչի ջուրը և միջի նշանները. յետոյ սկսում են վիճակի երգերը երգել տուն առ տուն. ամէն մի տուն երգից յետոյ «հարսը» մի նշան է դուրս բերում ջրից. մէկը կանգնում է և ցոյց տալիս թղթին: Երգերի առանձին հերթ չկայ. ամէն մէկը իր ցանկացածն է առում, յոյս ունենալով, որ այդ իրեն կվիճակուի: Երգերը առում են և առանց եղանակի. թէև առանձին խումբ է լինում ասողների և երգողների, որոնք ամբողջ երգերը գիտեն, ցոյց բազմութեան միջից առանձին, հատ-հատ ասողներ էլ լինում են: Երբեմն էլ երկու խմբի են բաժանուում և հերթով-մըցելով առում են:

Որովհետև անպայման հաւատում են, դրա համար էլ աշխատում են անպատճառ ճիշտ համարել երգուած տունը դուրս հանուած նշանի տիրոջ բախտի համեմատութեամբ, նշանի տիրոջ վիճակը համեմատում են երգի հետ և համաձայնեցնում:

Բերենք մի քանի տուն բախտ գուշակող երգերից.

Մէրն ի կերե խաւածիլ,

Տղէն բերե օսկեծիլ.

Հարս, հան վիճակն ի բարին¹

Համբարձում զիլադդ կատարի,

Հասնես քո սրտի մուրազին:

1 Ամէն մի տնից յետոյ, որ լինում է քաւատող, եղատող և երկատող, պէտք է կրկնել այս կրկնակի. կրկնակի մէջ ներթով փոխում եւ զօրծ են ածում այս անունները. Արեւադան, Եղունիկ, Ոսկուհատ, Կարկիկ ևւ այլն:

Մէքն ի կերե մածուն,
 Տղեն բերե ածուն:
 Հարս, հան, և այլն:
 Երկէն թաքանչէն դրեցինք,
 Մօտ Աստուած հարցում գնացինք,
 Աստուածուց բախա ու դովաթ ուղեցինք:
 Հարս, հան . . . և այլն
 Աստուած ինձ տուեց քառսուն որդի,
 Քառսուն որդուն՝ քառսուն մաքի.
 Քառսընի պճեղն ի ոսկի:
 Համբարձման նստեր ես կար կանես.
 Աստուծմէ կխնդրես, որ ոսկի օրօրոց օրօրես:
 Աչքեր կանթեղ կնմանի,
 Եկեղեցուց կկախուի,
 Ընքուեր (յօնք) անանակ (ծիածան) կնմանի,
 Երկնուց երեսէն կկախուի:
 Բալնիսն երկնքով ընցաւ,
 Մեր բարոց զոներն եբաց,
 Մեր տուն արեով լցուաւ,
 Մեր սեղան կարմիր խնձորով:
 Մանուկ քնե ծառի տակ,
 Ծառ-ծառ ոսկին բարձի տակ,
 Ձէն տամ, կտրիճ վեր էլնի,
 Ձուր չերթայ քո հարդու տակ:
 Հետեւեալ կտորները առանց եղանակի են առում.
 Էրթաս Աղթամար, Սուրբ խաչայ համար.
 Ա. խաչ քե լաճմ՝ տայ, անուն Մխիթար.
 Օրօրոց ոսկի, ծածկոց մարգարտի:
 Ա. զջիկ, դու հասար քո մուրազին.
 Ես աշնան կերթաս քո պսակին:
 Ժանգոստ մախաթ,
 Քե վո՛վ ի հատրաթ,
 Պարագլուխ, հաց վաստակող:
 Խմեր ես նռան գինի.
 Հոտ քաշեր ես մանուշակի:
 Ահա այս մի քանի կտորի ըովանդակութիւնից կարելի է
 հասկանալ Վանեցի կնոջ ցանկութիւնները, բախտը, աշխարհա-
 հայեացքը և առհասարակ նրա ցանկութիւնների սահմանը:
 Ամէն մի Վանեցի հասած աղջիկ, որի բախտը-ապագայ
 կեանքը-պէտք է որոշուի այս և նման երգերով, սրտատրոփ
 սպասում է տարուայ այդ օրին: Նա անպայման հաւատում է

այս գուշակութեանը, դրանով խմանում է, թէ ով է լինելու քի փեսացուն (նայած թէ ում վրայ է խորհուրդ արել), արդեօք երջանիկ թէ ապերջանիկ է լինելու: այդ ամուսնութիւնը: Պամաւոր ամուսնութիւնը (սիրավարութեան յաջողութեան մասին խօսք լինել չի կարող անշուշտ) Վանում շատ հաղուած դէպ է. ծնողներն են կամեցողը, թէ երբ և ում հետ պէտք է նշանեն իրենց աղջիկը: Երբեմն աղջիկը համարձակւում է յայտնել ժօրը, թէ ինքը մի երիտասարդի վրայ խորհուրդ է արել և վիճակը բարեյաջող գուշակութիւն է արել: միայն այս դէպքում, որովհետեւ մայրը հաւատում է այդ բանին, ծնողները զիջող են լինում և աղջիկը կարողանում է իր ուղածին առնել, այլապէս նա մի առարկայ է լուի, որին շատ անգամ ծնողները ծառայեցնում են շահագիտական նպատակներին¹:

Այս հանգամանքի շնորհիւ վիճակի խաղը ճակատագրական նշանակութիւն է ունենում. իսկ նրա գուշակածը արդէն անպայման կերպով եղած պրծած բան: Ամէն երգից յետոյ ընդհանուր կարծիքների փոխանակութիւն է լինում և աշխատում են ծաղրել հասած աղջիկներին, պնդելով նրանց ապագայ փեսացուների մասին անունով: Երիտասարդներն էլ տուած են լինում նշաններ և խորհուրդ արած իրենց ընտրած աղջիկներին մասին. գուշակութիւնները նրանց հաղորդում են ազգականները:

Իրա նշանները վերջանում են, հանդէս-վիճակախաղը վերջացած է համարւում և բոլորն էլ ուրախ տրամադրութեան տակ ցրւում են, որովհետեւ Վանեցու վիճակի երգերի մէջ տխուր բան գուշակող քիչ երգեր կան. մեծ մասով դրանց բովանդակութիւնը դառնում է հարստութեան, երջանկութեան և բախտաւոր ամուսնութեան շուրջը: Սակայն այս մասին յետոյ աւելի ընդարձակ, երբ կխօսենք ընդհանրապէս բոլոր երգերի բովանդակութեան մասին:

Մնում է մի վերջաբան գործողութիւն ևս, որով վերջանում է այս նշանաւոր կենցաղական գծի-վիճակի խաղի բոլոր արարողութիւնները Վանում, որի նկարագրութիւնը աշխատեցինք մանրամասն անել: Այդ վերջաբան ծէոը դարձեալ գուշակութիւն է, որ տրւում է «աստղունք» դրած ջրով: Հանդէս կազմակերպողները, գործը մինչև վերջը կարգադրող-

1. Վերջին տարիներում պատրիարքարանի հրամանադրով ծխատէր քահանան, նշանադրութիւնից առաջ խոստովանեցնում է աղջկան, բայց դժուար թէ այս ծելը իր նպատակին բաւարար կերպով ծառայի, որովհետեւ «համեստութիւնը» ծայրահեղ աստիճանի է:

ները և ղիճակի գուշակութիւննց դժգոհողները դեռ ևս չեն ցրւում: Փարչի ջուրը լցնում են մի թասի մէջ. երկու առջինեկ (անդրանիկ) աղջիկներ բութ մասներով բռնում են թասը, մօտենում է դժգոհը, վերջին անգամ խորհուրդ է անում և մատը քսում ջրի երեսին. եթէ ջուրը ձախ պատուեց այդ նշան է, որ վատ գուշակութիւնը անպատճառ կկատարուի առանց այլեւայլութեան. իսկ եթէ աջ, այդ նշան է, որ կարող է լինելու եղած վատ գուշակութիւնը: Այս գործողութիւնը վերջին ապաւէնն է արդէն. դրա համար էլ թատրոնողները ճարպիկութեամբ այնպէս ծածուկ շարժում են անում, որ ջուրը աջ է պատւում, որով մեղմանում է դժգոհողի տխրութիւնը:

Ջուրը չեն թափում գետնին, այլ լցնում են գնալուն ջրի մէջ, կամ քսում են մազերին, որ շատ երկար աճեն:

Այժմ անցնենք ուրիշ տեղերում եղած դործողութիւններին, թէ երբ և ինչպէս են կատարում: Ինչպէս վերևում յիշեցինք, այս արդէն անում ենք համեմատութեամբ, աշխատելով աւելի քան քսանհինգ տեղերի ինքնուրոյն արարողութիւնները հարադատ նկարագրութեամբ պատկերացնել:

Ա. Ծաղիկ հաւաքելը:

Աշտարակում, բացի տղամարդկանցից, ամբողջ բնականօրով և ազգականներով հաւաքւում են այդիներում, թէ զուարճանում ամբողջ օրը (չորեքշաբթի) և թէ ծաղիկ հաւաքում. առաջ շինում են մի մօծ և գեղեցիկ վունջ՝ «ծաղկամէր» անունով, որը միև օրը նուիրում են եկեղեցուն:

Արթիկում (Նիրակ) գիւղի ամբողջ բնակչութիւնով՝ դափ ու զուռնայի ուղեկցութեամբ, պարելով են դաշտ դուրս գալիս և ծաղիկ հաւաքում:

Սիսիանում ծաղիկը հաւաքում են երեքշաբթի. տղաների և աղջիկների տարբեր խմբեր դաշտ են դուրս գալիս, հերթով երգում են սիրոյ երգեր. երկու խմբերն էլ աշխատում են լաւ երգելով կամ սրախօսութիւններով իրենց բնորաձին գիւրգալ: Հաւաքած ծաղիկը փնջում են չորեքշաբթի: Գանձակի գաւառում ջուրն ու ծաղիկը միասին են հաւաքում, ջուրը 7 աղբուրից, իսկ ծաղիկը եօթ «բանգ». Տիգրանակերտում ծաղիկը հաւաքում են չորեքշաբթի երեկոյ, ջրի հետ միասին: Բուլանքում նոյնպէս:

Արծիէում և Գործոթում (Բերկրի) բնտրում են ամենագեղեցիկ աղջիկը, դարձարում են թանկագին հագուստներով

և զարգերով, միայն աղջիկները թափուր են կազմում, դաշտ են դուրս գալիս ծաղիկ ժողովելու: Այս ժամանակ հոտաղները յարձակում են և դարգարուն աղջկայ զարդերից մի բան խլում. փրկանք են պահանջում (մեծ մասով ուտելիք, որով ուրախութիւն են սարքում) և այնպէս վերադարձնում: Այս երկու տեղում և Սիսիանում հովիւր սարերի ծաղիկներով մի գառն է զարգարում, հետեւեալ օրը դրան ման է ածում գիւղում և փող հաւաքում:

Գրեթէ ամէն տեղ, ուր կատարւում է վիճակի տօնը, անպայման կայ և ծաղիկ հաւաքելու սովորութիւն. այժմուայ քիմաստով ծաղիկ գերը միայն դարգարանքն է, սակայն հաւանօրէն, ունեցել է ուրիշ ներգործական նշանակութիւն, իրրեւ ներկայացուցիչ և մարմնացում բուսականութեան սղու. մի քանի տեղերում ջուրը բացի «աստղունք» գնելուց, մէջը ծաղիկ թերթեր էլ են լցնում. որպէսզի աւելի զօրաւոր լինի ջրի կախարդական յատկութիւնը:

Բ. Զուր եւ նշան հաւաքելը.

Զուրը մանաւանդ էական տեղ է գրաւում վիճակի արարողութեան մէջ և նրա հաւաքելը կապուած է աւելի խորհրդաւոր ձևերի և պատկառանքի հետ: Զուրը հաւաքողները այդ գործողութեան ընթացքում երբէք չափաի խօսեն:

Զաւախքում (Ախալքալաք), Մշում, Բուլանքխում և Աշտարակում ջուր վերցնելը ոչ մի առանձին խորհրդաւորութիւն չունի. այս տեղերում վերցնում են օր ցերեկով, ծաղիկ հետ միասին: Աշտարակում միայն մի առուից են վերցնում ջուրը, մէջը մի բուռ աւաղ են լցնում. ապա հերթով զանազան նշաններ են ձգում մէջը՝ այս խօսքերն ասելով. «Գնացի սաղ աշխարհ ման էկայ, շատ խէր ու բարի տեսայ, շատ փորձանքների ռաստ էկայ, էկայ ընկայ էս բղղի մէջ. ուրիշ խօսքով, այդ ամէնից յետոյ իր բախտը դարձեալ այդ բղղիին է յանձնում . . .

Սիսիանում ջուր և նշան հաւաքում են հինգշաբթի առաւօտ արշալուսին: Հին Բայազիտում ջուրը վերցնում են 7 աղբիւրից չորեքշաբթի-հինգշաբթի կէս գիշերին: Վերցնողները ամէն աղբիւրում լուացւում են և մոմ վառում: Արթիկում կէս գիշերին են վերցնում, բայց մի առուից. Կողբում նոյն ժամին մի քանի աղջիկ գնում են գետի ափը, նրանցից մէկը պարզւում է գետնին և բերանով խոնաւ աւաղ է վերցնում միայն՝ ջրի փոխարէն:

Արժէութիւն, Գործութիւն, Արճէշում, Կողքում և Հին-Բաշադիւտում ջուր վերցնելուն առում են ջուր գողնալ: Կարելի է այսպէս բացատրել, դողանում են, որպէսզի տղաները չտեսնեն կամ չիմանան. կամ թէ հէքեաթներէից մնացած ազդեցութիւն է, ուր հերոսը անմահական ջուրը գողանում է, որպէսզի պահապան վիշապը չիմանայ և արդելի: Պէտք է նկատել, որ ամէն տեղ աշխատում են այդ գործողութիւնը տղամարդկանցից ծածուկ անել: Մի քանի տեղերում երբ տղամարդու են պատահում, ջուրը թափում են և նորից սկսում հաւաքել:

Նշան հաւաքելու համար ամէն տեղ ծաղիկ են բաժանում և նշանի հետ ստանում են ձու, իւղ, կաթ, բրինձ և այլն, որոնցմով յետոյ ճաշ են պատրաստում և գուարճանում. այսպէս անում են այն տեղերում, ուր միայն ազջիկներն են մասնակցում հանդէսին: Մի քանի տեղ նշան հաւաքելիս ծաղիկ հետ բաժանում են ջուր և աւաղ, որոնց լցնում են ձուով (խնոցի) մէջ, որպէսզի կարագը առատ լինի:

Առտաբադում նշանը հաւաքում են տղաների և ազջիկների ներկայութեան և սրանք փոխադարձաբար, իրենց հաւանածների վրայ խորհուրդ են անում և այնպէս նշանը ձգում ջրի մէջ:

Ջրով և նշաններով լցուած ամանը ամէն տեղ զարդարում են ծաղիկներով և դնում դուրաքը, առաղերի ներգործութեան տակ. ամանի բերանը բաց է լինում ի հարկէ, որպէսզի, ինչպէս արժէքին առում է, «առաղունք իրիշկան մէջ»: Միայն նոր-նախիջեանում ամանը ծածկում են բահեղով և այնպէս դնում դուրսը:

Վիճակ փախցնելու սովորութիւնը ամէն տեղ կայ, և ամէն տեղ էլ անպատուարեր բան է համարւում ազջիկներէ համար:

Խրժիկ շինելու սովորութիւնը միայն Արժէութիւն և Խիւսում (Տիգրանակերտի գաւառ) կայ. վերջինումս այդ խրժիկը կոչւում է «կաթնով ապուրի աբուս», որին խաղի ժամանակ ծաղկեփրնջեր են նուիրում:

Վանում նախքնթաց չորեքշաբթին նուիրւում է ծաղկամօր. ամէն տեղ նոյնը լինում է:

Ծաղկամայր կոչւում էր Վառվառէ անունով մի կոյս, որի գերեզմանը գտնւում է Արայի լեռան մի այրի մէջ, ուխտատեղի է շրջակայ բնակիչների համար: Վառվառէն Արևմուտքից Հայաստան փախած մի կոյս էր, ասում է Աշտարակցին, ասպաւնում է Արայի լեռան մի այրում. կռապաշտ հայրը հե-

տեւելով դանձում է նրան այդ այրի մէջ և վերջը նահատակում։ Կոյսը, մեռնելուց առաջ խնդրում է Աստուծուն, որ ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւն ունեցող մանուկները իր անունով բժշկուին։ Աստուած կատարում է նորա խնդիրը, և նրան աղօթող ամէն մօր որդին ազատւում է այդ հիւանդութիւններից։ Ամէն Համարձման տօնի օրը, ինչպէս ասացինք, Արայի լեռան շրջակայ հայերը ուխտի են գնում ծաղիկ վանքը, Յադկամօր գերեզմանը համբուրելու և աղօթելու։ Ուխտագնացութեանը միանում է և վիճակ հանելու սովորութիւնը, որը կատարւում է հազարաւոր ուխտաւորների մասնակցութեամբ, պարով ու նուագածութեամբ։

Աշտարակում «Ծաղկամէր» կոչուած լիւնջը ման են ածում և «Ծաղկամօր փայ» են ժողովում։ հաւաքածները լիովանակ Յադկամօր նուիրելու (աղքատներին բաժանելու), իրենք են անուշ անում։

Ջաւախքում Ծաղկամօր անունով տօն են պահում տարուայ առաջին և վերջին օրը, գարձեալ նոյն նպատակով։

Գ. Կախարդական գիտերը.

Այս գիշերը հայ ժողովրդի համար հրաշալիքների գիշեր է. անկենդանները կենդանանում են, իրար ողջոյն են տալիս և սիրով գրկախառնւում։ ջրերը միառժամանակ կանգնում են հոսելուց, նոյն իսկ ոսկի են դառնում։ Յայտնւում է այն չնաշխարհիկ ծաղիկը, որի արմատը ձեռք բերողը հեշտութեամբ կարող է սիրած էակի ոէրը դրաւել. երևում է և ամենաբոյժ ծաղիկը, որի յատկութիւնը հաւատար է արեւելցու երազած թանկագին «մաջունին»։ Երկինքն ու երկիրը, ըոյրը աստղերը լիովադարձ համբոյր են տալիս միմեանց... — Ահա համառօտապէս այն հրաշալի երևոյթները, որոնք վերագրւում են Համբարձման գիշերուան։ Այդ ժամին ողջ բնութիւնը համակուում է բանականութեան կարողութեամբ։ «Լէյլին ու Մէջլումը կիզան ողջում կառնեն, էն վախտ քար, թուփ, ծաղկունք քիւրադի ողջում կառնին, կեղնին լեզու. էն վախտ որն օր տեսնի, ինչ օր խնդրայ, կկատարի...» հաւատալով պատմում է Ապարանցի դեղջուկը, որ հազիւ թէ աչք է բաց անում չարքաշ կեանքի հոգսերից։

Ջաւախքում ասում են, թէ կախարդական ժամին խոտերն ու ծաղիկները լեզու են առնում, խօսում են իրար հետ և յայտնում, թէ իրենցից որը ինչ հիւանդութեան բուժիչ դեղ է, կամ թէ իրենց արմատի տակը ինչ գանձ կայ թաղուած։

Սակայն ամէն մարդ չի կարող հեշտութեամբ հասկանալ սրանց լեզուն. միայն նա, ով օձերի թագաւոր Շահմար օձին թրի մի հարուածով մէջտեղից երկու կէս կանի և պոչի կողմի կէտը կուտի, նա միայն կարող կլինի տէր դառնալ այդ հազունգիււտ շնորհքին. բժիշկ Լօխմանին կարողացել է անել այդ պահանջը, որից յետոյ ընդունակ է դարձել բոյսերի լեզուն հասկանալու և դարձել է հռչակաւոր բժիշկ¹։ Զաւախքի և Մշի գիւղացիները կողպէքով կամ թելով կապում են բոյսերի ցողունները, որից մի քանի նշաններից եզրահայտում են իրենց կեանքի տեղութեան չափը։

Բուլանքիցին կարծում է, որ այդ ժամին «քէմիան ծաղիկ լուս կուտայ»։ այս ծաղիկը անխօս կենդանիներին խօսելու շնորհ է տալիս. գտնւում է Բիւրակին (Բին-Գեօլ) օտար լրաց միայն, եթէ մի ոչխար պատահաժամբ ուտի այդ ծաղիկը և 12 քայլ հեռու աղբիւրից ջուր խմի, ապա կոտանայ խօսելու ընդունակութիւն և ով գիտի ինչէր կխօսի... Հովիւները հետեւում են ու աշխատում օգնել ոչխարին՝ մօտիկ տեղից ջուր բերելով։

Մշեցին կարծում է, թէ նա միայն կհասկանայ բոյսերի խօսակցութիւնը, ով կտեսնի Լէյլ և Մէջլում ասաղերի գրկախառնումը. այսպիսի մէկը հեշտութեամբ կճանաչի և «սիրոյ կոճը», բոլոր երիտասարդների ամենացանկալի բանը։

Աշտարակցին ասում է—Մատին ու Արագածը գրկախառնւում են և բոյսերը զրոյց են անում. ապա Արարատեան դաշտում հսկայական սեղան է բացւում, որտեղ Լէյլ ու Մէջլու զոգգ սիրահարները զուարճանում են. ամէն մարդ չի կարող տեսնել այս բանը. եթէ Լէյլի լցրած գինին Մէջլուն խմի, ապա տեսնողի ցանկութիւնը կկատարուի, իսկ եթէ հակառակը, ապա և ցանկութիւնը կմնայ անկատար։

Տիգրանակերտում «Լէյլան ու Մաջլուն» ասաղերի գրկախառնումը տեսնելը նոյն նշանակութիւնն ունի. այդ պատճառով բոլորը աշխատում են արթուն մնալ և տեսնել։

Սասունցին կարծում է թէ ով տեսնի այս ասաղերի համբուրելը, կարող է հարստանալ, եթէ ցանկանայ. մի Սասունցի տեսնում է, լիոխանակ ասելու «բռւմ սոկի» ասում է «պիրմ սոկի» և իսկոյն պիրը (ձեռնափայտ-բիր) դառնում է սոկի։

Այս երկու անձերը—Լէյլ ու Մէջլու—առասպելական անձ-

1. «Զաւախքի բուրմունք» Գիրք Բ. 48. և. Լալայեան։ «Էմինեան ազգագրական ժողովածու»—«Բժիշկ Լոխման» Ս. Հայկունի։

նաւորութիւններ են, Մշեցիւն այսպէս է պատմում. այդ անուններով երկու սիրահարուածներ են լինում, երբ տեսնում են, որ չեն կարողանում իրար արժանանալ շնորհիւ իրենց ծնողների բռնութիւններին, խնդրում են Աստուծուց, որ իրենց կեանքը դադարեցնի այս աշխարհում և երկինք թռցնելով աստղ դարձնի։ Աստուած կատարում է սիրահար զոյգի խնդրուածքը։ Յայց են տալիս երկու լուսաւոր աստղեր երկնակամարի վրայ, դէմ ու դէմ, որոնցից մէկը Լէյլանն է, միւսը Մէջլուն։ Ամէն Համբարձման տօնին, տարեկան մի անգամ, զրանք համբուրուում են և իրենց սիրոյ կարօտը յագեցնում։ Բուլանքիցին նոյնը պատմում է այս փոփոխութեամբ, թէ սիրահար զոյգի դադանի տեսակցութիւնն ու համբուրուելը տեսնում է Մեջլումի մայրը, նրա վրայ հասնելու ըոպէին սիրահարները սարսափելի ամօթից Աստուծուն են դիմում, որի հրամանով երկինք են լարձրանում և աստղ դառնում։

Ժողովրդի բերանում աղօտ կերպով պատմուած այս առասպելը նմանութիւն ունի Orion-ի (Հայկ համաստեղութիւն) յայտնի առասպելին։ Թողնենք Յունաց գիցաբանութիւնը մի կողմը այս սիրահարների նման պատմութիւնը և նոյն անուններով պատմուած է և թուրքերի պարսիկների ու քրդերի մէջ։ Քրդերէնով կայ մի գեղեցիկ քերթուած¹, ինչպէս նրանց «Սիւամանդօ և Խջէգարէ» գեղեցիկ պօէմն է։ Պարսիկ նկարիչները նիւթ են վերցրել այս աւանդութիւնից. նրանցից շատերը նկարել են Մէջլումի սիրուց տանջուած ու նիհարած մարմինը անապատում ընկած, ուր նա դնացել է անապատի դադաններէից օդնութիւն խնդրելով իր կոյած սիրուհուն դանելու համար։

Քրդերն էլ մեզ նման այդ սիրահարների համբուրուելու ժամը Համբարձման գիշերում են կարծում. հաւանօրէն մեղանից են վերցրել։ Մեր հրաշալիքի գիշերը նոցա համար էլ կախարդանքի ու հրաշքների գիշեր է։

Միայն այսքանով չի լուսանում կախարդական գիշերը ... Ամէն դնայուն ջուր կանգնում է. ով այդ ըոպէին մի րան ընկղմի ջրի մէջ, իսկոյն ոսկի կգառնայ։ Մի քանի տեղ ինչպէս Արթիկում, աշխատում են ջուր վերցնել հէնց այդ ըոպէին, որպէսզի աւելի զօրաւոր լինի։ Տիգրանահերացին, Եթէ մի մարդ ջրի դադարման ժամին ջուր վերցնի կանգնած Տիգրիսից և

1. «Նոր-Դար»-1896 № 158. 141. 142ում հայերէնի Թարգմանուած։

առանց ետ նայելու տուն դռնայ, ջուրը ոսկի կգառնայ, ճանապարհին ծառ, քար, բոյս, ամէն ինչ ջուր տանողի ետեից կանչում են, որ կանգնի, եթէ սա ետ նայի, կխեղագարուի: Իսկ եթէ նստի, կամ ջրի ամանը ցած դնի, կախարդանքը կանցնի, թէև ինքը կաղատուի խեղագարուելուց: Ինչպէս պարզ յայտնի է, այս կտորը ամբողջապէս վերցրած է հեքեաթից:

Ջաւախքում ջրի կախարդանքը լինում է տարուայ վերջին գիշերը, երբ երիտասարդները մի շարք արարողութիւններով աշխատում են ջուր վերցնել, որպէսզի ոսկի դառնայ¹: Ակնում նոյնպէս,—կախարդութեամբ ժամին ջուրը ոսկի է հոսում:

Ջուրը, թէ կախարդութեամբ ժամին և թէ առհասարակ կախարդական գիշերում հոսանում է և բուժող յատկութիւն. ամէն անգ աշխատում են նրա մէջ լողանալ: Նուխում այդիներեց հաւաքում են այդ գիշերուայ իջած ցողը, որը վարդով եռացնում են և գլուխները լուանում, որ մաղերը երկարի: Ախաբալաքում մայիսի 7-ի անձրևը մաղեր երկարացնելու յատկութիւն ունի, նա կաթն էլ է մակարդում:

Նոր-Բայազէտում և Աքարանում նոյն գիշերուայ ջուրը տաքացնում են, մէջը կանաչ խոտ են ձգում և դրանով լողացնում տան ընդ որ անդամներին: Լողանում են և Մշում, Բուլանըխում: Լողանալիս աղօթում են «Լէյլ ու Մէջլուն», որով իրենց «ցաւն ու շուքը» ջրին է անցնում: Այս երկու տեղերում չորեքշաբթի երեկոյ տանտիկիները երեքնուկ են ժողում, ձմումի մէջ ձգում²:

Այս կախարդական գիշերում «մեզնից աղէկներն» ու չարքերն էլ հանդիստ չեն մնում. նրանք հարս ու աղջիկ են փախցնում, կովերի կաթը ցամաքեցնում և այլն: Մշում և Բուլանըխում զանազան միջոցներ են ձեռք առնում իրենց կթի կենդանիները լիբչուց աղատ պահելու համար, որը բացօդեայ տեղում ոչինչ անել չի կարող. այդ պատճառով էլ ընդ որ կենդանիներով և ընտանիքով բացօդեայ են անցկացնում այդ գիշերը: Լէբչին կամ Լէբրարը կախարդ պառաւ է, որ զանազան կախարդական գործողութիւններով աշխատում է դրացիներին կթան կովերի «խէր ու բարաբեաթը» իր տունը

1. «Ազգ. Հանդէս. 1897 թ. դիրք. 247.

2. Հաւարում են կրիայի կոտ. օձի շապիկ, էշի պայտ եւ փիրուկայ ուլունք, կապում են ձմումին որ չարքից աղատ մնայ եւ կտրաղը առատ լինի: Եօժ արագիլի բոյնից խոխլ են վերցնում, խառնում որիչ փայտի հետ եւ կամը տարացնում, որպէսզի շատանայ:

փոխադրել. այս գործողութիւնները կոչւում են լէք, իսկ կատարողը լէքբար: Պառաւ լէքբարը այդ գիշերը մերկանում է, մի մազէ պարանով կապում է կաշէ գոգնոց, ձգում է հարում, որի թանը թափում է դրացիների կտուրների վրայ. ապա իջնում է նրանց բակը, ուր կով է կապուած լինում, կովերի մի կողմից միւսն է թռչում (շէնքել). յետոյ վերցնում է երկու սալաքար և մի քիչ խռիւ վերադառնում է տուն և խռիւը վառում քարերի վրայ (այս բոլոր կախարդական գործողութիւնների ժամանակ նա կախարդանքի խօսքեր է մըմնջում): Այսքանով վերջանում է լէքը և պառաւի տունը միշտ լի է լինում դրացիների ձգումի «խէր ու բարաքեաթով»:

Կախարդական ջրում բուժուելու համար մի մարդ և կին լողանում են գետում, յանկարծ կինը աներևութանում է. «Թղթբացն օր ախսարք¹ նշանց կիտայ օր չարքերն են տարած . . . » Թղթբաց միաժամանակ խորհուրդ է տալիս խեղճ մարդուն, որ մի տարի սպասի: Հետեեալ տարի նոյն ժամին, նոյն տեղում մարդը սպասում է. հեռուից մի խումբ կանայք են դալիս, ամէնքը մի մի երախայ գրկած. մարդը դրանց միջից ճանաչում է իր կնոջը, գրկի երախային ջուրն է ձգում, իսկ կնոջը տուն բերում, ազատում չարքերի ձեռքից:

Այս և դեռ ուրիշ շատ տեսակ բաներ է պատմում ժողովուրդը: Ամէնքը կարծում են, որ Վանայ Քարի վրայի Մըհերի Դուռը² նոյնպէս բացւում է կախարդական ժամին. կա-

1. Ախտար, պարսկերէն բառ է, որ նշանակում է աստղո այդ անունով էլ կոչւում է աստղաբաշխ-կախարդների զիրքը արեւելքում, որով եւ աստղերին նայելով գուշակութիւն են անում:

2. Armenische volksglaube, M. Abegian V. 57—66 եր. այս գերմաներէն աշխատութեան մէջ պ. Արեղեանը յիշում է «Մհերի այրի» մասին. որտեղ գտնւում է հռչակաւոր ճակատագրի անխը-Չարիս-իֆալադը: Վանեցին այդ անխի ճանապարհը ուրիշ է զնում. Վանայ-Քարը. քաղաքին կպած մի լերկ ժայռերի շարք է. որի վրայ է Դուռը. դրա արեւելեան կողմում կայ մի նշանաւոր այր. տեղացոց լեզուով Չըմի-Չմի-Մարաղայ (Թօփրակ-կալ է). տասնեակ քարեայ աստիճաններով իջնում ենք մինչեւ այրի յատակը. մի ընդարձակ դահլիճ. պատուհաններով եւ լայն դռնով. այդ այրն է. առաստաղը հետզհետէ ցածանում է. միանում է յատակին. Թողնելով մի մութ եւ խոր անցք. որը ժողովրդի կարծիքով պէտք է լինի Չարիս-իֆալադի ճանապարհը, պէտք է 99 կամ 404 աստիճան ցած իջնել. անվերջ զնալ եւ ապա հասնել անխին. Մինչեւ 1880 թ. այդ անցքը բաց էր, ներկայ Վահափառ կաթուղիկոսը իր Վանի առաջնորդութեան ժամանակ (1879—83) փակել տուեց. որով-

ըելի է ներս մտնել. տեսնել առիւծաձև Մհէրին, նրա ձին, աստղազարդ երկնքի, երկրի և ճահատագրի անիւն. կարելի է ստանալ անբաւ հարստութիւն և լինել ամենաերջանիկը:

Այդ հսկայական անիւր դառնում է սասերկրեայ հոսող Գայլ գետով, որ անցնում է Զրմի-Զրմի-Մարաղայի առաստաղով, որից անընդհատ կաթում է նրա ջուրը. այդտեղից գնում է Մհէրի Դռան հասնում, իսկ այդ երկուսի մէջտեղում դարձնում է Զարիս ի-Ֆալագը, աշխարհի դոյութիւնը պահպանող անիւր: Կախարդական ժամին դադարում է հոսելուց և Գայլ գետն ի հարկէ. ուստի և դադարում է անիւր: Եթէ հարցնես Վանեցուն, թէ ինչ բան է այդ անիւր. նա, թէև չի ասել, բայց այնքան է լսել, որ սկսում է հիացմունքով ու զանազան ձևերով նկարագրել անիւրը—Գատառտանի տարին, աւելացնում է նա, Գայլ գետը կցամաքի, անիւր կդադարի, Մհէրի Դուռը կբացուի, Մհէրը դուրս կգայ և աշխարհին վերջ կտայ . . . »:

Ահա թէ որքան առատ պատմութիւններ ունի հայ ժողովուրդը կախարդական գիշերուայ մասին:

Վ. Համբարձումն վիճակահանութեան օրը:

Համբարձումը նշանաւոր տօներից մէկն է. այդ աւելի փառաւոր է դառնում, երբ միանում է ժողովրդական տօնն էլ, վիճակի սովորութիւնը, երբ սար ու ձոր թնդում է «ջան գիւլում»ներով:

Ամէն տեղ, բացի Վանից, Մշից և Բուլանքից, այսօր կաթնապուր են եփում: Ջաւախքում և Խիանում Համբարձումը կոչւում է կաթնապրի օցն. իսկ Տիգրանակերտում ասում են վիճակ: Գանձակում թէ կաթնապուր են եփում և թէ մատաղ անում:

հետեւ շատ հետաքրքիր երիտասարդներ անդգուշութեամբ զլորում էին մէջը եւ կորչում: Այդ անցրը մեր երկրում շատ սովորական «Կեդան» դեալմագներէց է. այրը մի ժամանակ բերդ է եղել, այդ անցրը երեւի իջնում էր մինչեւ մօտիկ ձորում հոսող գետակը. Ծիշտ Անիում եղածի նման: Այդ այրը արուեստական է եւ ժողովուրդը դրա շինութիւնը վերադրում է շատ հին ժամանակների ինչ որ ձնվըզ իշխանների: Թուրք կառավարութեան արտօնութեամբ մի քանի տարի առաջ գերմանացիներ պեղումներ կատարեցին այրի մօտերը, դուրս բերին քառակուսի մեծ մեծ քարերի հազարաւոր կտորներ, ինչպէս եւ անթիւ հին անօթներ, զրամներ, կուրք եւ այլն. Այս բոլորը տարուեցին Բերլին:

Արժէքում, Մշուծ, Արճէշում և Արարանում վիճակի ջուրը իր ամանով քահանային օրհնելու են տալիս:

Ակնում այս ձևի վիճակ հանելու սովորութիւնը մոռացուել է, բայց նոյն օրը երկտասարգները օրացոյցով կամ վիճակի դրբով փողոցները ման են գալիս և հանդիպողի բախտը գուշակում:

Համշէնում միայն կաթնապուր են եփում այդ օրը և բոլորը գնում են ծովում լողանալու, այն հաւատով, որ այդ օրը ջուրն աւելի առողջարար է լինում:

Նիժ գիւղում Ուտէացի հայերը Համբարձման տօնը անւանում են «սրբերի գնալու օր»։ Կաթնով ապուր են եփում և բաժանում «զոհ» անունով: Բոլորը միասին են ճաշում, որի ժամանակ երգում են ջան գիւլումներ: Այդ օրուանից մինչև Հոգեգալութեան տօնը դռներից կարմիր թաշկինակ են կախում:

Վարանդայում Համբարձման տօնին կաթնապուր են եփում և աղքատներին բաժանում: Ոմանք էլ տանում են դաշտ, իրենց արտերի կողքին եփում, մի քիչ շաղ են տալիս արախ մէջ, որպէսզի հունձը լու լինի և արար աղատ մնայ միկներից, կարկախից և մորեխից: Վիճակը այստեղ հանում են Վարդավառի տօնին, քացառապէս հարսներն ու աղջիկները: Խաղից առաջ բոլոր աղջիկներին հերթով ճղոր (ճլորթի) են նոսեցնում, փայտով այնքան ծեծում են, մինչև որ նա սիրած աղայի անունը յայտնում է, կամ նշանածի անունը բարձրաձայն արտասանում է: Այս սովորութիւնը նոյնութեամբ կայ Վանում—բարեկենդանի օրերին, Աշտաբակում—Մեծ պատի առաջին օրը:

Ուրմիայում մոռացութեան է տրուած վիճակի սովորութիւնը, տեղի ասորի աղջիկները հայերի աները ման են գալիս և ձու հաւաքում այդ օրը:

Բուն վիճակ հանելու—ճակատագիր որոշելու գործողութիւնը գրեթէ ամէն տեղ նոյն է: Զաւախքում այս օրը գուարձանում են, իրենց վերցրած պաշարներով սեղան բաց անում, վիճակ հանում են հետեւաւ հինգշաբթի օրը: Վիճակի հարս են ընտրում մի մեծ աղջիկ, որ գործողութեան աւողութեան ընթացքում անխօս է մնում: Վիճակի երգերը մրցութեամբ երգում են աղաներն ու աղջիկները: Սիսիանում մրցութիւնը վերջանում է սրախօտութիւններով և ծաղրով: Տիգրանակերտում «հարսը» փոքրիկ աղջիկ է լինում և կոչւում է «վիժիկի արուս»: Մշում, Արճէշում և Արժէշում «հարս» են ընտրում ամենաչը—

նաղ աղջկան և միայն աղջիկներն են մասնակցում խաղին: Նոր-
նախիջևանում նշանները հէնց խաղի ժամանակ են ձգում ամա-
նի մէջ. խաղն սկսում են այս նախերգով — «վիճակ վիճակ օսկի
վիճակ, վարդ մանուշակ, թիւրլի չիչակ»։ «հարս» են ընտրում
երկու հոգու, որոնք հերթով նշանները հանում են. ամեն եր-
գից յետոյ աւելացնում են — «Քրիստոս (Աստուած) իր բերնով
ասաց»։

«այս քո ճակատդ էր գրած»։

Ի հարկէ մի աղջիկ, որ իր արած խորհուրդի և երգի մէջ
Աստուծոյ մատ տեսնի, այլ ևս չի համարձակուի չհաւատալ։

Վերջացնում ենք հայկական այս խոշոր կենցաղական դժի-
նկարագրութիւնը. այս տօնից զատ միայն ուխտագնացու-
թիւնն է, որ ամի ժողովրդական տօնի ընաւորութիւնն։ Իսկ
այն տեղերում, ուր այս սովորութիւնը մասնաւոր ընաւորու-
թիւն է ստացել, հարազատ չի կարող լինել իսկականին, որով-
հետեւ սա իսկապէս զուտ հեթանոսական սովորութիւնների
մնացորդ է կաղմում, ինչպէս յետոյ կտեսնենք, և իր հետ միա-
ցրել է թէ՛ բուսականութեան ոգու տանը, թէ՛ վիճակի և բախ-
տի և թէ՛ պանագան կախարդական հաւատալիքների յիշողու-
թիւնն ի մի ամիոյիող հրաշալիքի գիշերուայ յիշատակը։ Մեր
ժողովրդի մէջ մի քանի տեղ ազօտ կերպով յիշում են, իբր
թէ Քրիստոսը կախարդական գիշերուայ այն ժամին է համ-
բարձել, երբ ամէն ինչ կանգ է առել . . . Ժողովուրդը քրիս-
տոնէութեան այս վարդապետութիւնը միացրել է իր նախկին
հաւատալիքի հետ և Փրկչի համբառնալը այդ ընդունած կա-
խարդական երևոյթներից մէկն է ընդունում։ Իւր սիրելի սի-
րահար զոյգն էլ-Լէյլանն ու Մէջլունն էլ ձիշտ նոյն ժամին են
երկինք վերացել, աստղ դարձել . . . Ուրիշ օրինակներից էլ
տեսնում ենք, որ հեթանոսականը միացրել և զրեթէ իր մէջը
ձուլել է քրիստոնէական շատ բան և ինքը նրա անուան տակը
ժածկուել է։

Ինչ կապ կայ վիճակի սովորութեան մէջ՝ զուտ ժողովրդ-
ական-հեթանոսական սովորութեան և քրիստոնէութեան մէջ.
սակայն մեր գեղջուկը վիճակը իր սարքով տալիս է քահանա-
յին օրհնելու. իսկ յետոյ դնում է «աստղունք», ուրեմն նրա
կարծիքով անհրաժեշտ է և օրհնութիւնը և աստղերի ու քոյսերի
ներգործութիւնը, որպէսզի անսխալ լինի խաղի գուշակու-
թիւնը. ուրեմն «խաչն ու աւետարանը» գալիս են միանալու
հեթանոսութեան հաւատալիքների հետ . . . Մի խօսքով մեր
ժողովուրդը ուղեցիլ է միացնել — հաշտեցնել անհաշտելիները —
հեթանոսութիւնն ու քրիստոնէութիւնը և նրա այս հաղուա-

գլխւոյ յաւիտութեան շնորհիւ է, որ մնում են հեթանոսական հատ ու կտոր նշմարներ մինչև մեր օրերը, թէև միշտ քողարկուած:

Այժմ անցնենք աւելի ընդարձակօրէն ցոյց տալու վիճակի սովորութեան մէջ եղած հեթանոսական տարրերը, որոնք այստեղ, քան ուրիշ տեղական սովորութիւնների մէջ, այնպէս առատութեամբ չաղ է տուած:

(Շարունակելի).



ԳՐԱԽՅՈՍՈՒԹԻՒՆ

Das armenische Hymnarium, von Nerses Ter-Mikaëlian.—Հայկական Շարական. հեղ. Ներսէս Տ. Միքայէլեան, Leipzig, 1905.

Հեղինակը ըստ իւր յառաջաբանի նպատակ է ունեցել պարզել՝ ա. Հայ շարականը գիտական հետազոտութեան համար ինչպիսի պրօբլեմներ է ներկայացնում: Բ. Ի՞նչ հնութիւն ունի նա, գ. Թէ եկեղեցական աւանդութիւնը որ շարականը որ հեղինակին է վերագրում և թէ արդեօք որչափով պատմական է այդ աւանդութիւնը:

Ամենից առաջ նկատենք, որ հարցերի այսպիսի դասաւորութիւնը տրամաբանական չէ, որովհետև առաջին հարցի մէջ ամփոփուած են ոչ միայն հետեւեալ երկուսը, այլ և շատ ուրիշներ, որոնց պատասխանը մենք իրաւունք ենք ստանում որոնելու վերոյիշեալ ուսումնասիրութեան մէջ: Բայց շարունակութեան մէջ հեղինակը յայտնում է, որ նպատակ չէ ունեցել Հայ շարականների ծագումը և նրանց փոխադարձ յարաբերութիւնը դէպի հարևան երկիրների նման երևոյթները հետախուզել, բայց կարևոր է համարել զրել նաև մի յաւելուած Շնորհալուց անմիջապէս յետոյ գոյութիւն ունեցող տոմարի մասին: Այս ծրարգրի համաձայն—եթէ կարելի է մի ծրագիր գտնել—այս գիրքը բաժանուած է հետեւեալ զուխների. Ա. Ներկայ